

ՀԱՅՀՈՅՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մեծ եւ անբաւելի մեղք է հայհոյանքը եւ աւելի չար՝ քան Ադամէն մինչեւ այսօր բոլոր հեքուածները, որոնք ժողովով նգովուած են: Մեծագոյն հեքուածը հայհոյանքն է, որ բոլոր մոռուած մեղքերն ու չարիքները յիշել կու տայ Աստուծոյ, հրեշտակներուն ու սուրբերուն, կը դողացնէ Աստուծոյ արարածները եւ գարշելի հոտով կը լեցնէ երկիրը:

Հայհոյողները կը փակեն Աստուծոյ ողորմութեան դուռը, թոյլ չեն տար Արարիչին, որ ողորմած աչքերով իր արարածները տեսնէ եւ կ'արգիլեն սուրբերուն, որ բարեխօս ըլլան աշխարհին համար: Այս ձեւով քրիստոնէական անունը եւ քրիստոնէութեան աննառ խորհուրդը կը նախատուի եւ ասոր համար է, որ Քրիստոս ըսաւ. «Ան, որ Ս. Հոգիին հայհոյէ, պիտի չնեղուի անոր ո՛չ այս աշխարհին եւ ո՛չ հանդերձալին մէջ (Մտք. 12.33):»

Քրիստոս այս աշխարհին մէջ ոչ ոքի իշխանութիւն տուած է ներելու հայհոյողին: Միւս աշխարհին մէջ եւս ոչ ոք կը համարակի բարեխօսել՝ ո՛չ հրեշտակները ո՛չ ալ սուրբերը, այլ աշխարհաստեղծ բերնի անէծքներով դեւերուն հետ գեհէնի անշիջանելի հուրը կ'երթայ: Իսկ այս կեանքին մէջ այնքան ատեն, որ կենդանի է, բոլոր սուրբերը կը նգովեն այնպիսին: Աստուածախօս եւ մեծ մարգարէն Մովսէս նգոված է հայհոյողը՝ իր ամբողջ ունեցածով եւ նիստ ու կացով: Նոյնը ըրած են բոլոր սուրբերը: Արդարեւ, ո՞վ չի նգովեր Աստուծոյ Աթոռին հայհոյողն ու զայն դողացնողը:

Հորդորակներ

ՆՇԽԱՐ



Մաճուր ալիւրով եւ առանց թթիւմորի պատրաստուած կլոր այն հացն է նշխարը, որ Ս. Հոգորդութեան հիմնական նիւթը կը կազմէ գինիին հետ:

Նշխարի պատրաստութիւնը տեղի կ'ունենայ մասնաւոր տիպով (պիտի անդրադառնանք), որուն վրայ փորագրուած կ'ըլլայ խաչելութեան, Ս. Յարութեան կամ Գառն Աստուծոյ պատկերը, եւ այդ պատկերը կլոր խմորի վրայ ցցուն կը կնկուի:

Նշխարի միւս կողմը նկատով (որուն մասին անդրադարձանք նախապէս) կը ծածկեն, որպէսզի երկաթեայ թիթեղին վրայ եփուած պահուն հացի նման չուռի:

Տաղաւար տօներուն, երբ հաղորդուողներուն թիւը մեծ կ'ըլլայ, աւելի մեծ նշխարներ կարելի է պատրաստել մեծ տիպերով:

Ս. Պատարագի համար գործածելի նշխարը նոյն առաւօտեան պէտք է պատրաստուի, իսկ ինչ որ ժողովուրդին պիտի բաժնուի, կարելի է նախապէս պատրաստել:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ
ԲՈՒ ԽՕՍԵՐ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ես. 10.12-19: Բ. Կր. 2.12-3.3: Մր. 6.30-44

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 6.30-44

Առաքեալները վերադարձան Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին, ինչ որ կատարեցին եւ սորվեցուցին:

Յիսուս անոնց ըսաւ. «Եկէ՛ք երթանք ամալի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք», որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած:

Հետեւաբար իրենք առանձին նաւակ առին եւ գացին ամալի վայր մը:

Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ, թէ Յիսուս ալ անոնց հետ է, շրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր ծովեզերքէն վազելով անոնցմէ առաջ հասան անոնց երթալի վայրը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամբողջը, գթաց անոնց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ երկարօրէն ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ամալի տեղ ենք, եւ արդէն բաւական ուշ է: Արձակէ ժողովուրդը, որպէսզի շրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին»: Յիսուս անոնց ըսաւ. «Դ՛ուք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք հարցուցին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ երկու հարիւր դահեկան հաց գնենք զանոնք կերակրելու համար»: Յիսուս ըսաւ. «Գացէ՛ք, տեսէ՛ք, թէ քանի՞ հաց ունիք»: Աշակերտները ստուգեցին եւ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: Յիսուս հրամայեց աշակերտներուն, որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, երկինք նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն որպէսզի բաշխեն, եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՅՆ՝ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՅՈՐԱՅ
ԱՐԴԱՐՈՅՆ

Ս. Յովհաննու Կարապետ

Քրիստոսի գալուստը պատրաստող Աստուածառաֆ մարգարէներու լրումը հանդիսացաւ Յովհաննէս մարգարէն, որ աւետարեք հրեշտակին բառերով քաղց Տիրոջ առջեւէն Եղիայի հոգիով եւ գորութեամբ (հմմտ. Ղկ. 1.17):

Յովհաննէս իր պատանութիւնն ու երիտասարդութիւնը անցուց նգնական կեանքով, հագաւ ուղտի մագէ շինուած հագուստ մը ու մէջքին կապեց կաշիէ գօտի մը եւ կերաւ վայրի մեղր ու մարախ (հմմտ. Մրկ 1.6):

Ան երեսուն տարեկանին ժողովուրդը մկրտեց Յորդանան գետին մէջ եւ քարոզեց ապաշխարել եւ մկրտուի՝ որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ (հմմտ. Մրկ. 1.4): Ահա այս շրջանին Յիսուս մօտեցաւ անոր եւ մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ: Այս պատճառով Յովհաննէս ստացաւ Մկրտիչ տիտղոսը: Ան նանչցուեցաւ, նաեւ Կարապետ տիտղոսով, Քրիստոսի գալուստը նախապատրաստելուն համար:

Յովհաննէս Մկրտիչ իր կեանքի վերջին օրերուն բանտարկուեցաւ եւ ապա գլխատուեցաւ Հերովդէս թագաւորին հրահանգով, որովհետեւ ան յանդիմանած էր Հերովդէս թագաւորը իր կատարած օրինազանցութեան համար՝ ամուսնացած ըլլալով չմեռած եղբորը կնոջ հետ:

Յովհաննէս Մկրտիչին գլխատումէն ետք իր աշակերտները առին սուրբին անգուլիս մարմինը եւ թաղեցին գայն: Իսկ գլուխը, աւանդութեան համաձայն, կը մնայ Հերովդէսի պալատին մէջ հողով ծածկուած կաւեղէն անօթի մը մէջ:

Յոր Երանելի

Աստուածաշունչ մատեանի համբերութեան եւ Աստուծոյ կամքին հնազանդութեան ախոյեանը եղաւ Յոր Երանելին: 42 գլուխէ բաղկացած Յորի անունը կրող գիրքին սկիզբը, կը նեկայացուի Հուս երկրին մէջ ապրող մեծահարուստ մարդ մը, որ ըլլալով կատարեալ, արդար եւ Աստուծաւախ, Աստուծոյ օրհնութեան կ'արժանանայ եւ զաւակներ կը ծնի: Աստուած ցոյց տալու համար Յորի հաւատարմութիւնն ու համբերութիւնը, գիրքին մէջ պատմուած յատուկ թատերական ներկայացումով, հանգրուան առ հանգրուան կ'արտօնէ, որ կեանքին նեղութիւններն ու դժբախտութիւնները հարուածեն զինք եւ հարստահարելով ու հիւանդացնելով խեղճ մարդ մը դարձնեն: Սակայն Յոր կրելով այս բոլորը ու նոյնիսկ իր երեք բարեկամներէն լսելով նախատիմքի բառեր, իր հաւատարմութիւնը աւելիով կ'արտայայտէ Աստուծոյ հանդէպ եւ կ'արտասանէ իր նշանաւոր խօսքը. «Մօրս արգանդէն մերկ ելայ եւ հոն մերկ պիտի դառնամ: Տէրը տուաւ եւ Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տիրոջ անունը»: (1.21) Յոր վրայ եկած այս դժբախտութիւններէն վերջ, երբ Աստուած կը տեսնէ անոր հաւատարմութիւնը, կ'օրհնէ զինք եւ կրկնապատիկով կը վարձատրէ գայն: Ասկէ ետք Յոր 140 տարի կ'ապրի եւ կը տեսնէ իր որդիներն ու թոռները, մինչեւ չորրորդ ազգը: (42.16)

Ա.Ռ.Ա.Կ 9.3

Թողուցէք անզգամութիւնը եւ դուք կ'ապրիք: Իմաստութիւնը փնտռեցէք եւ դուք կը փրկուիք: Խոհեմութեան ճամբան բռնեցէք եւ ճիշդ ձեւով ըմբռնեցէք խրատը:

Հ Ո Պ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԱՍՏՈՒԾՈՅ ԻՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԲԵՐԱԾ ՈՐԿԱՍՈՒԹԻՒՆԸ ՈՐՆԻՔ

«Գինի չունին» (Յհ. 2.3): Հին Կտակարանին մէջ գինին ուրախութեան խորհրդանիշ իբրեւ կը ներկայանայ: Խօսքը պատահական ուրախութեան մը մասին չէ, այլ՝ այնպիսի ուրախութեան մը, որ ծնունդ կ'առնէ Աստուծոյ ներկայութենէն: Երբ Մարիամ կ'ըսէ. «Գինի չունին», կարծէք ամբողջ Իսրայէլի ժողովուրդին մասին է, որ հաստատում մը կ'ընէ: «Գինի չունին» ըսելով, կարծէք ըսել կ'ուզէ՝ «Իսրայէլի ժողովուրդը գինի չունի», այլ խօսքով՝ ուրախութիւն եւ երջանկութիւն չունի, որովհետեւ հեռացած է Աստուծոյ ներկայութենէն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Պ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Մենք մեր կեանքին մէջ գինի ունի՞նք, այլ խօսքով, ունի՞նք Աստուծոյ ներկայութիւնը, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան մէջ, եւ մանաւանդ, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան բերած ուրախութիւնն ու ցնծութիւնը: Եթէ ձեր սրտին մէջ գինի, այսինքն՝ ուրախութիւն չունիք, մօտեցէք Աստուծոյ եւ «առանց ստակի, ձրի գինի ու կաթ ծախու առէք» (Ես 55.1):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔԻՂ ՊԱՏԱՍԽԱՆԵՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ ապաստանս, ականջներդ մի՛ փակեր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ, որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ: Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի քու սուրբ տաճարդ կը բարձրացնեմ: Ձիս մի՛ դասեր հետը ամբարիշտներուն, հետը անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն ուրիշներուն, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ: Պատուհասէ՛ զանոնք իրենց գործերուն համաձայն, տու՛ր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին: Իրենց ըրածին համեմատ վարուէ դուն ալ իրենց հետ, հատուցանելով իրենց այն ինչ բանի, որ արժանի են: Քանի անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ, որ ան ստեղծեց, Տէրը զանոնք պիտի կործանէ այնպէս՝ որ ա՛լ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց: Չօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս եւ ես իրեն կը վստահիմ: Իրմէ կու գայ օգնութիւնս, եւ իմ սիրտս կը ցնձայ, հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ: Տէրը իր ժողովուրդին գորութիւնն է, ապաւէնը եւ փրկիչն է իր օժեպիւն:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՆՔ